Լեզուս չի խոսում, լալ եմ

Լեզուս չի խոսում, լալ եմ, հո՜, յարո,
Ես քու ձեռից հիլալ եմ, հո՜, յարո,
Ալագյազ բարձր սարի, հո՜, յարո,
Պաղ աղբյուրից զուլալ եմ, հո՜, յարո:

Քան լուսինն ամպի տակով, հո՜, յարո,
Դու ջուր կերթաս ձորակով, հո՜, յարո,
Հոգիս քեզ մատաղ լինի, հո՜, յարո,
Սիրտս կերես կըրակով, հո՜, յարո:

Քարի տակին պաղ աղբուր, հո՜, յարո,
Արծաթի թաս, ոսկի ջուր, հո՜, յարո,
Ես կըվառիմ քո սիրուն, հո՜, յարո,
Մի թաս ուզեմ, էրկուս տուր, հո՜, յարո:

Ձեր բաղի դուռը բաց է, հո՜, յարո,
Ոտներս շաղով թաց է, հո՜, յարո,
Ինձանից հեռացել ես, հո՜, յարո,
Աչքերս լիքը լաց է, հո՜, յարո: